<ՀԱՍՏԱՏՎԱԾ Է>

<Անալիտիկ> ՓԲԸ

<12>-----06-----2012թ.

տարեկան ընդհանուր ժողովի կողմից

ժողովի նախագահ՝ ՀՀ ԷԲՊ նախարար

_____Ա. Մովսիսյան

<ԱՆԱԼԻՏԻԿ> ՓԲԸ

2011 թվականի տարեկան

հաշվետվություն

-ԵՐԵՎԱՆ -

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Տեղեկատվություն Ընկերության, նրա կառավարման մարմինների և ենթակառուցվածքների, կազմակերպչական կառուցվածքի մասին

2. Ընկերության Քաղաքականությունը և Ռազմավարությունը

3. Արտադրական գործունեություն

4. Ֆինանսատնտեսական գործունեություն

5. Աշխատանք և աշխատավարձ

6. Եզրափակիչ դրույթներ

7. Հավելվածներ

1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Անվանումը՝
հայերեն լրիվ - "Անալիտիկ" փակ բաժնետիրական ընկերություն
կրճատ - "Անալիտիկ"ՓԲԸ

ռուսերեն լրիվ - Закрытое акционерое общество "Аналитик"
կրճատ - ЗАО "Аналитик"

անգլերեն լրիվ - "Analitic" closed joint-stock company
կրճատ - "Analitic" CJSC

հասցեն - ՀՀ ք.Երևան,Կոմիտաս 29 . 375012
հեռախոս - (+37410) 275073

հարկային մարմինում
գրանցման համարը - 00000749

"Անալիտիկ"ՓԲԸ
հաշվարկային հաշվի համարը
Արդշինինվեստբանկ - 247010000526

Պետ.ռեգիստրում գրանցման ամսաթիվը - 12. 02. 2009թ.
Գրանցման համարը - 26414000773
Վկայականի թիվը - 01 Ա 008033

Իրավակազմակերպական ձևը - փակ բաժնետիրական ընկերություն

Ընկերության կանոնադրական հիմնադրամի մեծությունը կազմում է 10970000 դրամ, բաժնետոմսերի քանակը 47 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսեր: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 233404 դրամ:
Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորված անձի ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի կողմից:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընկերության ստեղծման նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որն իրականացնելու համար ընկերությունը զբաղվում է հետևյալ գործունեությամբ՝
օգտակար հանածոների հայտնաբերման նպատակով երկրաբանական նմուշների համալիր հետազոտում:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվություն) առկայության դեպքում:

Ընկերությունն ունի <Որակի բնագավառում քաղաքականություն>:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. Բաժնետիրոջ ընդանուր ժողով՝ Ընկերության կառավարման բարձրագույն մարմին

Արմեն Խիկարի Մովսիսյան - ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար, ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող

2. Ընկերության միանձնյա գործադիր մարմին՝

գլխավոր տնօրեն - Սուսաննա Հովսեփի Սարգսյան

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

«Անալիտիկ» փակ բաժնետիրական ընկերությունը ստեղծվել է ՀՀ բնապահպանության նախարարության 26.12.1997թ. N 135 որոշման համաձայն, «Անալիտիկ» ՊՓԲԸ «Կենտրոնական լաբորատորիա» պետական ձեռնարկության վերակազմավորման ճանապարհով: Ընկերությունը հանդիսանում է «Կենտրոնական լաբորատորիա» պետական ձեռնարկության իրավահաջորդը (վկայական 01 Ա 008033, գրանցման թիվ 264.140.00773): ՀՀ կառավարության 15.05.2008թ. թիվ 653-ն որոշմամբ «Անալիտիկ» ՊՓԲԸ-ի բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին: Ընկերության 30.12.2008թ. արտահերթ ընդանուր ժողովում ընկերությունը վերանվանվել է «Անալիտիկ» ՓԲԸ:

Ընկերության կանոնադրությունը իրավաբանական անձանց պետռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնում գրանցվել է 12.02.2009թ.:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերության տնօրինության տակ է գտնվում լաբորատոր նպատակներով կառուցված շենքը, որը շահագործման է հանձնվել 1970 թվականին, և կից հողատարածքը:

ՀՀ կառավարության 21.05.1998թ. թիվ 311 որոշման համաձայն ընկերությանը պետական սեփականության իրավունքով տրամադրվել է անշարժ գույքի սեփականության (օգտագործման իրավունքի գրանցման վկայական, որը գրանցվել է անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 1-2 մատյանի 0000054 համարի տակ:

Շենքի ընդանուր մակերեսը կազմում է 3205.6 քառ.մետր, իսկ հողամասի չափը՝ 0.42 հա:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերությունը հանդիսանում է օգտակար հանածոների որակի գնահատման բնագավառում գործող առաջատար անալիտիկ լաբորատորիաներից մեկը: ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1678-Ն որոշմամբ "ԱՆԱԼԻՏԻԿ" ՓԲԸ վրա դրված են նաև օգտակար հանածոների շարքային նմուշների կրկնօրինակների հսկողական անալիզներ իրականացնելու պարտավորությունները:

2011 թվականի մայիսի 28-ին <ԱՆԱԼԻՏԻԿ> ՓԲԸ որակի կառավարման համակարգը ճանաչվել է որպես համապատասխանող ISO 9001-2008 ստանդարտի պահանջներին հեղինակավոր TUV Nord սերտիֆիկացման մարմնի կողմից:

Ընկերության ղեկավարությունը ձգտելով՝

- Առավելագույն չափով բավարարել պատվիրատուների, պետության և այլ շահագրգիռ կողմերի պահանջները ու սպասումները,
- Ամրապնդել իր հեղինակությունը որպես բարձրակարգ ծառայություններ մատուցող կազմակերպություն,
- Պահպանել ու բարձրացնել պատվիրատուների վստահությունը,

որպես ռազմավարական նպատակ է սահմանում՝ բարձրացնել Ընկերությունում գործող որակի կառավարման համակարգի արդյունավետությունը:

<ԱՆԱԼԻՏԻԿ> ՓԲԸ ռազմավարական նպատակը իրականացնելու համար կազմակերպության ղեկավարությունը իր բոլոր աշխատողների անունից պարտավորվում է՝

1. Ստեղծել որակի կառավարման համակարգի արդյունավետ գործառնությանն ուղղված կազմակերպչական և կառուցվածքային պայմաններ, հատկացնել անհրաժեշտ ռեսուրսներ:

2. Մատուցել ծառայությունները պատվիրատուների, պետության և այլ պարտադիր նորմատիվաիրավական պահանջներին համապատասխան: Փորձարկումները կատարել ապահովելով՝ <օբյեկտիվ>, <անկախ>, <անաչառ> և <վստահելի> լինելու սկզբունքը:
3. Ընդլայնել իրականացվող լաբորատոր փորձարկումների շրջանակները, հաշվի առնելով պատվիրատուների ընթացիկ և ապագա սպասումները: Բարելավել պատվիրատուների բավարարվածության գնահատման համակարգը:
4. Լաբորատոր փորձարկումների և նախաձեռնած միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով պարբերաբար իրականացնել դրանց վերլուծությունը, գնահատումն ու վերահսկումը:
5. Ապահովել աշխատողների բարձր որակավորումը և անընդհատ բարձրացնել նրանց մասնագիտական ունակությունները:
6. Անընդհատ արդիականացնել փորձարկումների համար անհրաժեշտ անալիտիկ սարքավորումները և չափիչ-հսկիչ սարքերը, ինչպես նաև նորմատիվատեխնիկական փաստաթղթերը:
7. Ստեղծել բարենպաստ աշխատանքային միջավայր:
8. Ապահովել սույն քաղաքականության ընկալումը կազմակերպության աշխատակազմի կողմից:

3. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2011 թվականի ընթացքում <Անալիտիկ> ՓԲ ընկերությունն աշխատել է 3 մասնագիտացված լաբորատորիաներով.

1. ֆիզ-քիմիական մեթոդներով հետազոտման լաբորատորիա
2. քիմիական լաբորատորիա
3. ոչ հանքային հումքի փորձարկման լաբորատորիա

Լաբորատոր աշխատանքների ծավալը կազմում է 49996.0 հազ. դրամ: Ըստ մասնագիտացված լաբորատորիաների կատարված աշխատանքների ծավալը հետևյալն է.

N	Մասնագիտացված լաբորատորիա	2011թ. կատարված ծավալը (հազ.դրամ)	2011թ. կատարված ծավալը (պայմ. անալիզ)	2010թ. կատարված ծավալը (պայմ. անալիզ)
1.	Ֆիզ-քիմիական մեթոդներով հետազոտման լաբորատորիա	25107.8	17149.6	16490.5
2.	Քիմիական լաբորատորիա	22761.2	14421.9	13029.5
3.	Ոչ հանքային հումքի փորձարկման լաբորատորիա	2127.0	2180.2	1807.2
	Ընդամենը	49996.0	33751.7	31320.7

2010 թվականի /48474.9 հազ.դրամ/ համեմատությամբ 2011 թվականին /49996.0 հազ.դրամ/ լաբորատոր աշխատանքների ծավալը դրամական արտահայտությամբ աճել է շուրջ 3.1%-ով, իսկ ֆիզիկական ծավալը՝ 1,1 անգամ:

Ընդերքի հետ կապված երկրաբանական խնդիրների լուծումն անհնար է առանց լաբորատոր ուսումնասիրությունների, քանի որ այդ արդյունքների շնորհիվ է հնարավոր հաստատել հետազոտվող օգտակար հանածոների որակական ու քանակական բնութագիրը, քիմիական կազմը և դրանց արդյունաբերական օգտագործման ուղիները: Լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները երկրաբանական աշխատանքների հայելին է, յուրաքանչյուր անալիտիկ տվյալ իր արտացոլումն է գտնում այդ աշխատանքների արդյունավետության մեջ:

Կադրերի բարձր որակավորումը, տեխնիկական զինվածությունը և այնպիսի անալիտիկ մեթոդների կիրառումը՝ ինչպիսիք են ատոմային-աբսորցիան, թերմոգրավիմետրիան, քրոմատոգրաֆիան, ինֆրակարմիր սպեկտրոսկոպիան, թերմիկան, դիֆրակտոմետրիան, կոլորիմետրիան, ֆոտոմետրիան և այլն, հնարավորություն են տալիս լաբորատոր հետազոտությունները կատարել պատշաճ մակարդակով, ապահովելով վստահելի անալիտիկ տեղեկատվություն երկրաբանական աշխատանքների ցանկացած փուլում:

Լաբորատոր հետազոտությունների հիմնական առարկաներն են հանդիսանում բազմամետաղ սուլֆիդային, պղնձային, պղնձակոլչեդային, պղնձամոլիբդենային հանքանյութերը, սիլիկատային կարբոնատային լեռնային ապարները, ջրերը, շինանյութերը մետաղյա թափոնները և այլն:

2011 թվականի մայիսին Գերմանական հանրահայտ TUV NORD սերտիֆիկացնող ընկերության աուդիտորների կողմից անցկացվեց <Անալիտիկ> ՓԲԸ-ի Որակի կառավարման համակարգի աուդիտ, որի արդյունքներով ընկերությանը հանձնվեց <Որակի միջազգային սերտիֆիկատ>՝ հաստատելով

լաբորատորիայի որակի համապատասխանությունը Միջազգային ISO 9001-2008 ստանդարտի պահանջներին:

1. Ֆիզիկո-քիմիական մեթոդներով հետազոտման լաբորատորիայում կատարվում են թանկարժեք մետաղների պարունակության որոշումներ՝ տարբեր անալիտիկ մեթոդներով:

2. Քիմիական լաբորատորիայում կատարվում են սև, գունավոր, հազվագյուտ ու ցրված, ալկալիական մետաղների սիլիկատների, քարածխի, տորֆի, ջրերի, մետաղյա թափոնների քիմիական հետազոտումներ:

3. Ոչ հանքային հումքի փորձարկման լաբորատորիայում կատարվում են ապառների, շինանյութերի նմուշների ֆիզիկական և մեխանիկական փորձարկումներ: Արդյունքների հիման վրա տրվում է եզրակացություն, որտեղ նշվում է հետազոտված նմուշների համապատասխանությունը ստանդարտի պահանջներին և նպատակային օգտագործման հնարավորությունները:

4. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2011 թվականին Ընկերության տարեկան համախառն եկամուտը հիմնական գործունեությունից կազմել է 49996.0 հազ. դրամ: Նշված եկամուտի գոյացման աղբյուրներն են մասնագիտացված լաբորատորիաների կողմից կատարված երկրաբանական նմուշների լաբորատոր հետազոտումները:

Այլ գործունեությունից եկամուտը կազմել է 9837.0 հազ. դրամ: Ընդամենը եկամուտը 59833.0 հազ. դրամ:

Իրացված աշխատանքների ինքնարժեքը կազմել է 43402.0 հազ. դրամ, վարչական ծախսերը՝ 10871.0 հազ. դրամ, գործառնական այլ ծախսերը/ հարկեր նայլ/ ՝ 1126.0 հազ. դրամ: (հավելված 1):

Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումները կազմել են՝ 33645.0 հազ. դրամ, սոց. հատկացումները՝ 4854.0 հազ. դրամ,

2011թ. ընկերությունը ապահովել է շահույթ՝ 4434.0 հազ. դրամի:

Ընդհանուր ծախսերի մեջ առանձին ծախսային հոդվածների համամասնությունը տոկոսային արտահայտությամբ կազմում է՝

հազ. դրամ

Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ	33645	60.7 %
Հատկացումներ սոցապ հիմնադրամին	4854	8.8%
Հումք և նյութեր	9335	16.8 %
Վերանորոգման ծախսեր	1950	3.5 %
Այլ ծախսեր	4489	8.2 %
Հարկեր	1126	2.0 %
Ընդամենը	55399	100

Ընկերության ակտիվների կառուցվածքում ոչ ընթացիկ ակտիվները կազմում են 42.6 %:

Սեփական կապիտալը աճել է 1152.0 հազ. դրամով և կազմում է հաշվեկշռի պասիվային մասի 81.4 %: Կանոնադրական կապիտալի զուտ գումարը կազմում է 10970.0 հազ. դրամ:

Ընկերության պարտավորությունների կազմում ոչ ընթացիկ պարտավորությունները կազմում են 3.8 %:

Շահութահարկի գծով ծախսը կազմել է 577.0 հազ. դրամ: Զուտ շահույթը շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո կազմել 3857.0 հազ. դրամ:

Ընկերությունն առաջարկում է շահույթի բաշխման հետևյալ ուղղությունները.

- զուտ շահույթի՝ հաշվի առած ավելացումները՝ 50 %-ը համաձայն ՀՀ կառավարության 03.03.2011թ. N 202-Ն որոշման, փոխանցել պետբյուջե որպես պետական մասնակցության դիմաց շահաբաժին:
- զուտ շահույթի 5 %-ը հատկացնել պահուստային հիմնադրամին,
- զուտ շահույթի մնացած մասը թողնել որպես չբաշխված շահույթ:

5. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

2011թ. ընթացքում Ընկերության փաստացի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմել է 23 մարդ, 2010թ. նույն ցուցանիշը կազմել է 19 մարդ: 2011թ. ընթացքում աշխատանքի են ընդունվել 5 մարդ, աշխատանքից ազատվել՝ 5 մարդ:

Մասնագիտական որակավորում պահանջվող աշխատողների 100 %-ը ունեն համապատասխան բարձրագույն կրթություն, աշխատողների 22 %-ը մինչև 35 տարեկան են, 22 %-ը՝ 35-50 տարեկան, 56 %-ը՝ 50-ից բարձր տարիք ունեցող աշխատողներ են:

2011թ. ընթացքում աշխատողներին վճարված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարները կազմել են 3645.0 հազ. դրամ, միջին աշխատավարձը կազմել է 1682.2 հազ. դրամ:

Ընկերությունում գործում է <Ներպիտիկ>ՓԲԸ ընկերության աշխատողների վարձատրման և խրախուսման> կանոնակարգը:

Ընկերության գործադիր տնօրենի հաստիքային դրույքաչափը կազմում է 130000 հազ. դրամ, իսկ գլխավոր հաշվապահինը՝ 90000 հազար դրամ:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2011թ. ընթացքում Ընկերությունը երկրաբանական նմուշների լաբորատոր հետազոտումներ կատարելու համար կնքել է պայմանագրեր 15 ընկերությունների հետ, ինչպես նաև համապատասխան պայմանագրեր են կնքվել Ընկերության արտադրական գործունեության անխափան ընթացքը ապահովող տարբեր կազմակերպությունների հետ:

2011թ. ընթացքում նախատեսված բոլոր հարկերը յուրաքանչյուր ամիս, օրենքով նախատեսված ժամկետներում վճարվել են ինչպես պետբյուջե, այնպես էլ սոցիալական ապահովության հիմնադրամ:

2011թ. նոյեմբերի 1-ի դրությամբ Ընկերությունում անց է կացվել հիմնական միջոցների գույքագրում, որի արդյունքները արտացոլվել են 2011թ. տարեկան հաշվետվություններում: Ընկերությանը պատճառված վնասի, անօրինական դուրս գրումների, վճարումների և ծախսերի դեպքեր, ինչպես գույքագրման արդյունքներով, այնպես էլ տարվա ընթացքում չեն արձանագրվել:

Համաձայն ՀՀ կառավարության [illegible] թվականի հունիսի 23-ի թիվ 881-Ն որոշման ընկերությունը հրապարակել է Կորպորատիվ Կառավարման Հայտարարագիրը: Հայտարարագիրը տեղադրված է Ընկերության www.analitikcenterlab.am ինտերնետային կայքի «Կորպորատիվ կառավարում» բաժնում:

«Անալիտիկ» ՓԲԸ
գլխավոր տնօրեն

Ս. Սարգսյան